ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

II

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-113

Լուսինե Տանաջյան, *պ.գ.թ.*
Սյուզաննա Բարսեղյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ

ՀԱՅԵՐԸ ՉԵԽԻԱՅՈՒՄ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Սփյուռքն ինքնին հարափոփոխ է և ունի փոխակերպվելու հատկություն: Բացի այդ, արդի *միգրացիոն* տեղաշարժերը ձևավորում են նոր խմբեր, օջախներ ու համայնքներ, որոնք ունեն իրենց զարգացման յուրահատկությունները: Այս առումով՝ հայկական Սփյուռքն, իր բազմազանությամբ և բազմաշերտությամբ, հետազոտողների առաջ նոր ուսումնասիրությունների դաշտ է բացում:

Այս հոդվածն ուղղված է բացահայտելու նոր Սփյուռքում տեղի ունեցող գործընթացներն ու դրանց առանձնահատկությունները՝ Չեխիայի հայերի օրինակով: Առաջ են քաշվել հետևյալ հետազոտական հարցերը. հասկանալ Չեխիայի հայերի համայնքային ներուժն ու հնարավորությունները, վեր հանել ինքնության պահպանման և համայնքային ինքնակազմակերպման գործոնները: Հոդվածը հիմնված է 2022թ. Չեխիայում հավաքված հետազոտական նյութերի վրա: Դաշտային աշխատանքի ընթացքում կիրառվել են խորին հարցազրույցի, կիսաձևայնացված հարցման և դիտման մեթոդները: Հարցազրույցներն արվել են Չեխիայում հայկական կառույցների ներկայացուցիչների, համայնքում առանցքային դերակատարների և փորձագետների հետ[2]:

Հիմնաբառեր՝ Սփյուռք, ինքնակազմակերպում, նոր ձևավորվող համայնք, չեխահայեր, ինքնություն, ներուժ, ինտեգրում:

Ներածություն

Հայկական Սփյուռքի ուսումնասիրությունների լայն բազմազանության մեջ քիչ են այնպիսիք, որ վերաբերում են նոր ձևավորվող համայնքներին՝ մասնավորապես սոցիալական համատեքստում: Ուսումնասիրությունները հիմնականում արդեն իսկ ձևավորված և կազմակերպված կամ թվաքանակով առավել մեծ համայնքների վերաբերյալ են: Այդպիսով, տեսադաշտից դուրս են մնում նոր սփյուռքյան օջախներն ու համայնքները: Նոր համայնքներն առավելաբար քննարկվում են *միգրացիոն* ուսումնասիրությունների դաշտում: Հատ-

---

1 Հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» պետական նպատակային ծրագրի (2020–2025թթ.) շրջանակում:

2 Արվել է շուրջ 20 հարցազրույց (№ 1–20): Դաշտային աշխատանքներն իրականացրել են ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատողներ Լ. Տանաջյանը, Ս. Ներսիսյանը, Ս. Բարսեղյանը, Ն. Խաչատուրյանը: Հարցումների ու հարցազրույցների մասնակիցներն ընտրվել են նախապես մշակված և քվոտավորված ընտրանքով (սեռ, տարիք, կրթություն, մասնագիտություն, ելքի երկիր ևն):

կապես ուսումնասիրված չեն այն համայնքները, որոնք ձևավորվել են ետխորհրդային տարբեր երկրներից և Հայաստանից ներգաղթած հայերից: Այս համայնքները հետաքրքիր են հատկապես իրենց ինքնակազմակերպման և ինքնության վերարտադրության փորձառությամբ: Այս առումով՝ ուսումնասիրության հետաքրքիր օրինակ կարող են լինել Չեխիայի հայերը: Հոդվածում քննարկվում են Չեխիայի հայ համայնքի պատմությունը, ձևավորման ընթացքը և ներկա իրավիճակը, Չեխիայի հայերի ինքնակազմակերպման առանձնահատկությունները, *մոբիլիզացիոն* ներուժն ու հեռանկարները:

Գրականության քննարկում

Վերջին տասնամյակներին սոցիալական հետազոտողների, սփյուռքագետների ուշադրության կենտրոնում են գտնվում սփյուռքներում ձևավորված նոր համայնքները, որոնք հատկապես քննարկվում են անդրազգայնության, համաշխարհայնացման և *միգրացիայի* տեսությունների համատեքստում: Նոր սփյուռքները կամ համայնքներն առաջանում են *միգրացիոն* տեղաշարժերի, տնտեսական հնարավորությունների փնտրտուքների, քաղաքական ցնցումների, պատերազմական իրավիճակների կամ այլ պատճառներով: Դրանք տարբերվում են դասական ուսումնասիրություններում ընդունված ավանդական սփյուռքյան համայնքներից:

Անդրազգայնությունը հիմնարար տեսություն է՝ Սփյուռքի նոր համայնքները հասկանալու ճանապարհին: Որոշ հետազոտողներ անդրազգայնությունը նկարագրում են որպես գործընթաց, որով *միգրանտ*ները սոցիալական, տնտեսական և քաղաքական կապեր են պահպանում ազգային սահմաններից դուրս՝ ստեղծելով ցանցեր, որոնք կապում են իրենց հայրենիքը և ընդունող երկրները[3]: Ծագման երկրների հետ այս կապերն օրինաչափորեն կարող ենք տեսնել Սփյուռքի նոր համայնքներում[4]: Անդրազգայնության տեսությունն ընդգծում է, որ նոր սփյուռքները սահմանափակված չեն մեկ աշխարհագրական տարածությամբ, փոխարենը՝ կարող են ազդել և ազդվել ինչպես ծագման, այնպես էլ ընդունող երկրներից[5]: Համաշխարհայնացման համատեքստում ավելի դյուրին է դարձել Սփյուռքի նոր համայնքների առաջացումը. դա կապվում է *գլոբալ* շարժունակության և *վիրտուալ* հաղորդակցությունների զարգացման հետ[6]: Համաշխարհայնացման տեսության հիմքում ընկած է նաև այն գաղափարը, որ նոր սփյուռքներն ավելի հեղհեղուկ և *դինամիկ* են, բնութագրվում են մշտական տեղաշարժերով և բնակության վայրերի հետ չունեն կապվածություն[7]: Նմանատիպ մոտեցումը, սակայն, մարտահրավեր է սփյուռքյան ավանդական այն *մոդել*ներին, որոնք շեշտադրում են ավելի կայուն կամ հաստատուն համայնքային ինքնությունները:

---

3 Schiller et al. 1995, 48–50.

4 Vertovec 2004, 975–978.

5 Portes et al. 1999, 217–218.

6 Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տես Appadurai 1996:

7 VanWey 2000, 793–795.

Մյուս մոտեցումը, որ բացատրում է նոր սփյուռքյան համայնքների առաջացումը, կապվում է հենց սփյուռքացման գաղափարին: Այստեղ խոսքը այն մասին է, որ *սփյուռք* երևույթն ինքնին գործընթաց է, այլ ոչ թե *ֆիքսված* վիճակ: Ջ. Քլիֆորդը և Փ. Գիլրոյը պնդում են, որ սփյուռքները շարունակաբար արտադրվում, վերարտադրվում և փոխակերպվում են շարժման, հարմարվողականության և ինքնության բանակցությունների գործընթացների միջոցով[8]: Այս մոտեցումը հատկապես կարևոր է Սփյուռքի նոր համայնքների համար, որոնք, հաճախ կրելով բարդ և փոփոխվող ինքնություններ, *ինտեգրվում* են իրենց ընդունող հանրություններին՝ կապեր պահպանելով իրենց հայրենիքի, ծագման կամ ելքի երկրների հետ: Այս մոտեցման շրջանակում սփյուռքները, նախապես սահմանված և որոշարկված խմբեր լինելուց զատ, քննարկվում են որպես զարգացող համայնքներ, որոնք ձևավորվում են պատմական, տնտեսական և քաղաքական գործոնների համալիր ներգործությամբ:

Հարկ է նշել, որ արդի նոր սփյուռքյան համայնքները գտնվում են *ինքնության բանակցությունների* փուլում, երբ հիմնական գաղափարը պտտվում է *հիբրիդ*ային ինքնության շուրջ[9]՝ հայրենիքի և ընդունող երկրի մշակույթների միախառնումով: Բհաբհայի *հիբրիդ*ության հայեցակարգը հաճախ է օգտագործվում նոր սփյուռքում գտնվող անհատների ինքնությունը նկարագրելու համար: Գիտական գրականության մեջ ընդգծվում է նաև, որ սփյուռքյան նոր համայնքների անդամները հաճախ կառուցում են ինքնություններ, որոնք հոսուն են, ճկուն և իրավիճակային՝ կախված թե՛ հայրենիքի, թե՛ ընդունող երկրի հետ իրենց փոխազդեցությունից[10]: Այս ինքնությունները *բանակցվում* են տարբեր *պրակտիկա*ների միջոցով՝ ներառյալ մշակութային արտադրությունը, սոցիալական ցանցերը, համայնքային կազմակերպություններին մասնակցությունը ևն:

Հաշվի առնելով տեսական այս շրջանակները՝ հայկական Սփյուռքում (որը համարվում է դասական սփյուռքի օրինակ[11]) առաջացող նոր համայնքներն ու խմբերը կարիք ունեն իմաստավորման և հատուկ ուսումնասիրության:

Հայերը Չեխիայում. պատմություն և համայնքային զարգացում

Չեխիայում հայերը՝ որպես համայնք, ձևավորվել և շարունակում են ձևավորվել շուրջ երեք տասնամյակի ընթացքում: Իհարկե, առկա են մի շարք տվյալներ այն մասին, որ Չեխիայում նաև ավելի վաղ են բնակվել հայեր / հայկական ընտանիքներ, որոնք, սակայն, համայնքային կյանք չեն ձևավորել: Նոր ժամանակներում՝ նախքան 1980-ականների վերջը, Չեխիայի մայրաքաղաք Պրահայում բնակվել է ընդամենը մեկ հայ ընտանիք: Գրառումներ կան 18-րդ դ. Չեխիայում բնակվող հայ վաճառական Աստվածատուրի որդի՝ Գևորգ Դա-

8 Այս մասին առավել մանրամասն տես Gilroy 1993; Clifford 1994:

9 Այս հարցի շուրջ առավել մանրամասն տես Brah 1996:

10 Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տես Hall 1990; Bhabha 1994, 8–13:

11 Tölölyan 1991, 3–4.

մասկոսցու մասին (Georgius Deodatus Damascenus, չեխական աղբյուրներում՝ Jiri Deodat), ով 1714 թ. հիմնել է Պրահայի առաջին սրճարանը, որը գործում է մինչ օրս (U Zlateho Hada՝ «Ոսկե օձի մոտ» անվամբ)[12]: Հայերը Չեխիայում զանգվածաբար սկսել են հաստատվել միայն 1980-ականներից սկսած: Չեխիայի հայերի հոսքը հատկապես մեծացել է 1990-ականներին և գագաթնակետին հասել՝ 1990–1993 թթ.[13]:

Առհասարակ, համայնքային կենսակերպի ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է հաշվի առնել գործոնների երկու խումբ. ընդունող երկրի պայմաններն ու հնարավորությունները (կրոնական, մշակութային միջավայր, ներգաղթի քաղաքականություններ, երկրի էթնիկ կազմ, բնակչության թվաքանակ ևն), ինչպես և ներգաղթյալների խմբի առանձնահատկությունները (ժողովրդագրական, մասնագիտական, սոցիալական կազմ, ելքի երկիր, գաղթի պատճառ ևն): Այս գործոններն են սովորաբար որոշարկում ներգաղթյալների հարմարման և ներուժի արտահայտման հնարավորությունները, մինչև իսկ՝ հայրենիքի կամ ծագման երկրի հետ կապերը:

Չեխիան՝ որպես ընդունող երկիր, ունի համակարգային մի շարք նմանություններ նախկին ԽՍՀՄ երկրների հետ, ինչն արդեն իսկ նպաստավոր պայման է ստեղծում հայերի հարմարման համար: Չեխիայի հայության մեջ անցկացված հարցումները, որոնք վերաբերում են գաղթի պատճառներին, ցույց են տալիս հետևյալ պատկերը. խորհրդային ժամանակաշրջանում Չեխիան դիտարկվել է որպես եւրոպական արժեքներով ու միջավայրով երկիր, որին ձգտել են ծանոթանալ շատ հայեր: Դրա շնորհիվ բավական մեծ թիվ են կազմել զբոսաշրջային այցելությունները, ինչն էլ, իր հերթին, թույլ է տվել ծանոթանալ տեղի միջավայրին, արժեքներին ու ապրելակերպին: Որոշ ընտանիքների համար Չեխիան դարձել է արտագաղթի երկիր՝ պայմանավորված Եւրոպային առավել մոտ լինելու հանգամանքով: Երկրորդային տվյալների և մեր հավաքագրած առաջնային տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Չեխոսլովակիան, իսկ հետագայում՝ Չեխիան դարձավ անկախ ՀՀ *միգրացիոն* մեծ ալիքների հիմնական տարանցիկ երկրներից մեկը: Սակայն ներկայումս Չեխիան փոխում է իր կարգավիճակը՝ տարանցիկ երկրից դառնալով վերջնական նպատակակետ երկիր[14]: Այս առումով՝ հարցվողներից մեկը նշում է.

> *«Իհարկե, Չեխիան շատ ձգող երկիր չէր, որովհետև բոլորը գալիս էին Չեխիա, հետո Չեխիայից գնում էին Գերմանիա, Ֆրանսիա: Տրանզիտ երկիր էր: Չեխիան ոչ մեկին նպաստներ չէր տալիս: Մեծ մասը, ովքեր գալիս էին, ցանկանում էին մի տեղ մտնել, որ նպաստ ստանային, պետության հաշվին ապրեին: Այդպիսի պետություններից են Հոլանդիան, Բելգիան, Գերմանիան ևն: Չեխիա գալիս էին մի որոշ ժամանակ մնում*

12 Սիմավորյան և այլք 2011, 121:

13 Ղանալանյան 2012, 65–68:

14 Košťálová 2020, 283.

էին, գնում էին: Որոշ մասն էլ մնում էր: Թեթևակի գործ էին ժողովրդական լեզվով ասեմ «կպցնում», արդեն մտածում էին՝ լավ, մնանք, տեսնեք՝ ինչ կլինի, հետո կգնանք»[15]*:*

Արտագաղթի մեջ հարցվողները հիմնականում շեշտում են սոցիալ-տնտեսական պատճառները, որոնց գերակշիռ մասը վերաբերում է աշխատանքին, սոցիալական ապահովության և բուժման հնարավորություններին: Չեխիայի *միգրացիոն* քաղաքականությունը, որն ավելի ազատական է՝ ի համեմատություն եւրոպական այլ երկրների, ուղղված է եղել կանխելու արտագաղթը և գրավելու արտերկրի աշխատուժը, արդյունքում՝ հատկապես բարձր որակավորում ունեցող մասնագետները ձգտել են տեղափոխվել այդ երկիր:

Հաշվի առնելով Չեխիայի վիճակագրական գրասենյակի պաշտոնական վիճակագրությունը (հաշվառումը՝ ըստ քաղաքացիության) և Չեխիայում ՀՀ դեսպանության տվյալները, ինչպես նաև համադրելով փորձագիտական տվյալները՝ Չեխիայի հայերի թվի միջին գնահատականը տատանվում է 8–10 հազարի միջև, սակայն այս թիվը ճշգրտված չէ: Ռուս-ուկրաինական վերջին պատերազմի հետևանքով այդ երկրներից Չեխիա ներգաղթած հայերի թիվն ավելացել է: Պաշտոնական վիճակագրությունում նշվում է թվաքանակի հետևյալ միտումը. 2005 թ. հայեր՝ 1046[16] է, 2009 թ.՝ 2025, 2010 թ.՝ 3500, իսկ արդեն 2016 թ.՝ 5000:

Չեխիայում հայերը բնակվում են ցրիվ տեղաբաշխմամբ՝ գլխավորապես ընտանեկան-ազգակցական հարաբերություններով կապված մարդկանց խմբերով: Հիմնական բաշխվածությունը, ըստ հետազոտության տվյալների, հետևյալ քաղաքներում է. Պրահա, Բռնո, Յիհլավա, Մլադա Բոլեսլավ, Օստրավա, Լիբերից ևն:

Եթե ընդհանրացված ներկայացնենք համայնքի ձևավորման հիմքը, ապա Հայաստանից և ետխորհրդային երկրներից Չեխիա ներգաղթածների առաջին խումբը շինարարներն են, ապա՝ մտավորականները, արվեստագետները (հիմնականում՝ նկարիչներ), իսկ վերջին տարիներին էլ փոխանակման ծրագրերով տարբեր համալսարաններից տեղափոխվել են որոշ ուսանողական խմբեր: Այս երեք խմբերն են հիմնականում կազմավորել համայնքը: Հարցազրույցի մասնակիցները նշում են.

«Քանի որ Չեխոսլովակիան կոմունիստական հասարակարգի փլուզումից հետո մեծ թափով շինարարություն սկսեց, այստեղ եկան իսկապես վարպետ շինարարներ և մասնագետ շինարարներ, որպեսզի ոչ միայն, կոպիտ ասած, ներկ քսեն, այլ լուրջ վերանորոգման աշխատանքներին մասնակցեն»[17]*:*

«Առաջին շինարարական խմբերին ավելացան 2-րդ, 3-րդ, 4-րդ շինարարական խմբերը, որոնք արդեն իսկ ծանոթ էին նախորդ խմբերին:

---

15 Պրահա, 2022 թ. հոկտեմբեր, հարցազրույց № 10:

16 Сумленный 2007, 151.

17 Պրահա, 2022 թ. հոկտեմբեր, հարցազրույց, № 12:

Կային մարդիկ, ովքեր այդ խմբերը կազմում էին Հայաստանում և բերում էին, մարդկանց աշխատանքով ապահովում»[18]:

Եթե դիտարկենք հարցվածների սոցիալ-մասնագիտական կազմն ու զբաղվածությունն ըստ քանակական տվյալների, ապա պարզ է դառնում, որ հայերը ներկայումս առավելապես զբաղված են երեք ոլորտներում՝ շինարարություն, առևտուր և սպասարկում, արվեստ և մշակույթ (մասնավորապես՝ խոսքը նկարիչների մասին է) [աղ. 1]:

Աղյուսակ 1.
Զբաղվածությունն ըստ ոլորտների (% հարցվածներից)

արդյունաբերություն	10,7
վարչարարություն, ֆինանսներ	6,3
շինարարություն	26,6
արևտուր և սպասարկում	36
գիտություն, մշակույթ, արվեստ	12,5
տեղեկատվական տեխնոլոգիաներ	4,7
անվտանգային համակարգ	1,6
մարքեթինգ, մենեջմենթ	1,6

Առևտրի և շինարարության ոլորտներում մեծ թվով հայեր ունեն փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք սովորաբար հիմնված են ընտանեկան կամ գոնե ազգային կապերի վրա: Չեխիայում, մասնավորապես՝ Պրահայում հայ համայնքի սոցիալական նշանակությունը զգալիորեն բարձրացել է քաղաքի պատմական կենտրոնում հայկական արվեստի պատկերասրահների ստեղծմամբ: Վերջիններս ապահովել են հայերի *վիզուալ* ներկայությունն այդ քաղաքում: Մինչ Պրահայում գերակշռում են նկարիչները, այլ քաղաքներում ավելի մեծ թիվ են կազմում մանր առևտրականներն ու վաճառողները[19]:

Վերոնշվածը հիմնականում առաջին սերնդին է վերաբերում, մինչդեռ երկրորդ սերունդն ավելի շատ կենտրոնացած է բարձրագույն կրթություն ստանալու վրա՝ ձգտելով ձեռք բերել հիմնականում իրավաբանական, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված մասնագիտություններ:

Հանրային *ինտեգրման* մակարդակում հայերի ներգրավումը բավական սահուն է՝ պայմանավորված մի շարք գործոններով. ա) հայերը և տեղի բնակչությունը ետխորհրդային ժառանգության կրողներ են և ունեն միջավայրային ու սոցիալ-*նորմատիվ*ային վարքի ընդհանրություններ, առկա են երկու երկրների համակարգային նմանություններ, բ) ռուսերենի ընդհանուր իմացությունը, չեխերենի և ռուսերենի միջև հասկանալիության բարձր աստիճանը, գ) հայերի փոքր թվաքանակը և համեմատաբար միատարր լինելը նույնպես նպաստել է սահուն հարմարմանն ու *ինտեգրման*ը:

18 Պրահա, 2022 թ. հոկտեմբեր, հարցազրույց, № 05:
19 Košťálová 2020, 288–294.

Հետաքրքիր են հարցազրույցի մասնակիցների դիտարկումներն առ այն, որ հայերը՝ որպես առանձին ազգային փոքրամասնություն, ճանաչված չեն և քանի որ մեծ թվաքանակ չունեն՝ ճանաչելի չեն հանրության կողմից: Հետևաբար՝ այն հարցին, թե ինչպես են տեղի բնակիչները բնութագրում հայերին, առկա է հետևյալ բացատրությունը. հային ճանաչում են որպես «սովետական մարդու» կերպար և միայն վերջին տարիներին են հանրության մեջ խոսում հայ լինելու մասին (մասնավորապես՝ Արցախյան վերջին պատերազմից հետո):

Իրենց հայ լինելու և հայ զգալու գործոնների համամասնությունը հետաքրքիր է դիտարկել հարցվողների պատասխաններով կազմված հետևյալ պատկերում [աղ. 2]: Այստեղից երևում է, որ դեռևս չկա համայնքային գործունեության զարգացման, բազմազանեցման անհրաժեշտության գիտակցում, ինչը ևս խոսում է այս համայնքի «սփյուռքացման»՝ դեռևս շարունակվող գործընթացի մասին:

Աղյուսակ 2.
Հայ զգալու/լինելու կարևոր գործոնները (% հարցվածներից)

լեզու	30
մշակույթ	23
կրոն / եկեղեցի	19
հայկական ծագում	12
Հայաստանի հետ կապ	11
համայնքային գործունեություն	4

Չեխիայի հայերի ինքնակազմակերպման փորձառությունը

Սովորաբար նոր հայկական համայնքներում ինքնակազմակերպման ընթացքը տարբերվում է ավանդականներից: Ավանդական համայնքներում առկա են *ինստիտուցիոնալ* կազմավորումներ, որոնց շուրջ *մոբիլիզացվում* է համայնքը՝ ինքնության և այլ հարցերում: Այս հաստատությունները՝ լինեն մշակութային, կրոնական, քաղաքական թե սոցիալական, ապահովում են այն կառուցվածքն ու *ռեսուրս*ները, որոնք թույլ են տալիս համայնքներին զարգանալ: Ծառայելով որպես տվյալ խմբի մշակութային ժառանգության պահպանման, սոցիալական աջակցության, քաղաքական շահերի առաջխաղացման և ցանցերի ձևավորման հիմնական միջոց՝ այս *ինստիտուցիոնալ* կառույցները համայնքաստեղծ հիմք են դառնում և նպաստում հավաքական, համախմբված գործողություններին՝ ապահովելով Սփյուռքի համայնքների շարունակականությունն ու ճկունությունը:

Մինչդեռ նոր սփյուռքյան համայնքներում ինքնակազմակերպման *ինստիտուցիոնալ* ձևերը զիջում են անձնային ձևերին: Թեև Չեխիայի հայ համայնքում կան կենտրոնացված հաստատություններ, ինչպիսիք են եկեղեցին, դպրոցը, մամուլը, միությունները, այդուհանդերձ համայնքային կյանքն ավելի շատ կառուցվում է անձնային *մեխանիզմ*ների շուրջ: Այդ կառույցների շուրջ համախմբվելու *դիսկուրս*ները հայերի մեջ կապված են առանձին անձերի գործու-

նեության հետ, ինչը մի կողմից՝ ստեղծում է անձնավորված և ամուր կապ, սակայն մյուս կողմից էլ՝ համայնքային կյանքի շարունակականության համար չի ապահովում *ինստիտուցիոնալ* հիմք:

Քանակական տվյալներից նույնպես պարզ է դառնում, որ հայերի մեջ բավական ցածր է համայնքային կառույցներում ներգրավվածությունը. հարցվածների մոտ կեսը (46,4 %) որևէ կերպ ներգրավված չէ, իսկ զգալի մասն էլ հանդես է գալիս պարզապես իբրև կառույցի անդամ կամ որևէ միջոցառման մասնակից: Հատկանշական է «համայնք չկա» պատասխանը (5 %), որը կրկնվում էր նաև որակական տվյալներում [աղ. 3]:

Աղյուսակ 3.
Ներգրավվածությունը կառույցներում (% հարցվածներից)

հովանավոր	5,0
կազմակերպիչ	5,0
կառույցի անդամ	13,8
մասնակից տարբեր միջոցառումների	23,8
ներգրավված չեմ	46,4
համայնք չկա	5,0

Մասնակիցների մեծամասնության դիրքորոշումներով՝ համայնքը անձ է, և անձով են պայմանավորված համայնքային կյանքի տարբեր կողմերը: Հետևյալ մտքերը՝ *«ու՞մ համայնքի մասին է խոսքը»*, *«համայնքի հարցը լուրջ է. դեսպանը կարող է համայնք դարձնել մեզ»*, *«եկեղեցու համայնքը կա, բայց պաշտոնական չէ»* ևն, ցույց են տալիս, որ նոր ձևավորվող համայնքում, մասնավորապես՝ Հայաստանից և ետխորհրդային երկրներից արտագաղթած հայերի մեջ *ինստիտուցիոնալ* կազմակերպման ձևերի բացակայությունը հանգեցնում է անձնային ձգողության կետերի ձևավորման, որոնցից յուրաքանչյուրն իր շուրջն է համախմբում հայերի որոշակի խմբի՝ ելնելով դրա ունեցած *ռեսուրս*ներից, հնարավորություններից, պահանջմունքներից ու սպասելիքներից:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել երեք կենտրոնական օրակարգ, որոնց շուրջ խմբավորվում են հայկական տարբեր շրջանակները. ա) հայաստանյան հարցեր, բ) համայնքային / համայնքաստեղծ հարցեր, գ) համահայկական հարցեր: Թերևս, այս երեքից առավել քննարկվող և առանցքային են հայաստանյան հարցերը, ինչն էլ երբեմն խանգարում է տեղային հարցերին անդրադառնալուն կամ ինքնության *մեխանիզմ*ների մշակմանը: Երբեմն անձնային և (կամ) խմբային հակասությունները պայմանավորվում են միայն հայաստանյան իրադարձություններով ու ՀՀ վերաբերյալ պատկերացումներով՝ ինչպես երևում է մասնակիցների հետևյալ մտքերից.

> *«Այստեղի հայերը մի քիչ սպեցիֆիկ են կապված Հայաստանի հետ, շնչում ենք հայաստանյան թեմաներով»*[20]:

[20] Դրահա, 2022 թ. հոկտեմբեր, հարցազրույց, № 01:

«Եթե իսկապես ուզում ենք համայնքները պահել, ապա հայրենիքը պետք է անպայման իր ներդրումն անի: Ներդրումը կարող է լինի նյութական տեսքով, կարող է լինի ոչ-նյութական տեսքով»[21]*:*

Չեխիայում հայերի մեջ Հայաստանից հստակ սպասելիքներ կան: Եթե ավանդական համայնքներում ինքնության պահպանման *մեխանիզմ*ների մշակման նախաձեռնությունը պատկանում է համայնքի անդամներին, ապա այստեղ ճիշտ հակառակն է՝ ինքնության պահպանման և *ակտուալացման*, կառույցների ակտիվացման հարցերը չեխահայերը հասցեագրում են Հայաստանին, երբեմն՝ ՀՀ դեսպանատանը, որին նրանք համայնքային կառույցի կարգավիճակ են վերագրում և նրանից համայնքային կառույցի գործունեություն ակնկալում:

Եզրահանգումներ

Այսպիսով, Չեխիայի հայ համայնքը ցույց է տալիս ինտեգրման *դինամիկ* և ակտիվ գործընթաց՝ մշակութային ինքնության պահպանումը հավասարակշռելով ընդունող երկրի սոցիալ-տնտեսական միջավայրին աստիճաբար հարմարվելու հետ: Չեխիայի հայերի մեջ ակնհայտ է երկրորդ սերնդում սոցիալական վերընթաց տեղաշարժ, որն արտացոլում է համայնքի ներսում մասնագիտական ներգրավվածությունը *դիվերսիֆիկացնելու* և չեխական հանրության մեջ խորապես *ինտեգրվելու* ավելի լայն հավակնություն:

Առկա է ինքնակազմակերպման համեմատաբար ցածր մակարդակ: Համայնքային գործունեությունն ու համախմբվածությունը պայմանավորված են անձնական նախաձեռնություններով և *կոնկրետ* անհատների ջանքերով՝ ստեղծելով ուժեղ, բայց խիստ անհատականացված ցանցեր: Անհատական ջանքերին ապավինելու հույսը հանգեցնում է նրան, որ համայնքային *ինստիտուցիոնալ* հիմքը չի կայանում, և հետևաբար՝ չի ապահովվում համայնքային կյանքի շարունակականությունը:

Ընդհանուր առմամբ, Չեխիայի հայերի ինքնակազմակերպման փորձն արտացոլում է անձնական ղեկավարության, թույլ *ինստիտուցիոնալ* շրջանակների և Հայրենիքից ունեցած մեծ ակնկալիքների բարդ փոխազդեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 2012
Ղանալանյան Տ.Հ, Չեխիայի հայ համայնքը // «Գլոբուս» վերլուծական հանդես, 2012, № 12, 65–87:

ՍԻՄԱՎՈՐՅԱՆ և այլք 2011
Սիմավորյան Ա.Ս., Հովյան Վ.Ռ., Ղանալանյան Տ.Հ., Ժամակոչյան Ա.Հ., Բաղալյան Է., Պապյան Ա.Ա., Մարտիրոսյան Ս., Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2011, 184 էջ:

СУМЛЕННЫЙ 2007
Сумленный С., Чешские армяне – маленькая община с большим потенциалом // 21-й

[21] Պրահա, 2022թ. հոկտեմբեր, հարցազրույց, № 07:

ВЕК, 2007, № 1/5, 151–165.

APPADURAI 1996
Appadurai A., *Modernity at Large: Cultural Dimensions of Globalization*, Minnepolis, University of Minnesota Press, 1996, 229 p.

BHABHA 1994
Bhabha H.K., *The Location of Culture*, London, Routledge, 1994, 285 p.

BRAH 1996
Brah A., Cartographies of Diaspora: Contesting Identities, London, Routledge, 1996, 1st ed., 288 p.

CLIFFORD 1994
Clifford J., Diasporas // *Cultural Anthropology, 1994, № 9/3*, 302–338.

VANWEY 2000
VanWey L., The Volume and Dynamics of International Migration and Transnational Social Spaces Thomas Faist // Social Forces, 2000, Vol. 79/2, 793–795.

GILROY 1993
Gilroy P., *The Black Atlantic: Modernity and Double Consciousness*, Harvard University Press, 1993, 280 p.

HALL 1990
Hall S., Cultural Identity and Diaspora // *Community, Culture, Difference*, 1990, № 8/6, 222–237.

PORTES et al.1999
Portes A., Guarnizo L., Landolt P., The Study of Transnationalism: Pitfalls and Promise of an Emergent Research Field // *Ethnic and Racial Studies, 1999, № 22/2*, 217–237.

SCHILLER et al. 1995
Schiller G.N., Basch L., Blanc-Szanton C., From Immigrant to Transmigrant: Theorizing Transnational Migration // *Anthropological Quarterly, 1995, № 68/1*, 48–63.

TÖLÖLYAN 1991
Tölölyan Kh., The Nation-State and Its Others: In Lieu of a Preface // *Diaspora: A Journal of Transnational Studies*, 1991, № 1/1, 3–7.

VERTOVEC 2004
Vertovec S., Migrant Transnationalism and Modes of Transformation // *International Migration Review, 2004, № 38/3*, 970–1001.

KOŠŤÁLOVÁ 2020
Košt'álová P., Czech-Armenians Relations: A Brief Historical Survey // Lehahayer: Czasopismo poświę Cone dziejom ormian polskich, 2020, № 7, 283–302.
[Չեխ-հայկական հարաբերություններ. համառոտ պատմական հետազոտություն // Լեհահայեր. ամսագիր նվիրված լեհահայերի պատմությանը, 2020, № 7, 283–302]:

Lusine A. Tanajyan, *Ph.D.*
Suzanna S. Barseghyan, *Ph.D.*
Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

ARMENIANS IN CZECH REPUBLIC: PECULIARITIES OF COMMUNITY LIFE

Keywords: Diaspora, self-organization, new community, Czech-Armenians, identity, potential, integration.

Among the wide range of Armenian Diaspora studies, few focus on newly emerging communities. Most research centers on already established communities, leaving new diasporic spaces and loci underexplored and inadequately addressed. The primary reasons for this are that these new diasporic loci do not conform to the conventional templates of the Armenian Diaspora that we typically envision ("classical diaspora", "victim diaspora", "old and new communities", etc.), and these loci are not yet regarded by researchers as sufficiently significant to be labeled as communities.

These emerging communities are particularly interesting, especially regarding their experiences of self-organization and identity reproduction. Communities formed primarily through the immigration of Armenians from various countries, including Armenia, during the Soviet and post-Soviet periods, remain largely understudied.

We believe a completely new approach is needed to study these emerging loci and trace their formation process. The loci present in the Czech Republic also require a fresh approach to community studies. This assertion is further supported by the research field: the current perceptions of community among Czech Armenians differ from the traditional understanding of community.

If a community does form, its nature would differ significantly from the classical model. The essential conclusion is that certain "points of gravity" exist among the Czech Armenians, creating a unique environment that attracts entirely new types of actors and their respective content.

These points of gravity-community actors-can include individuals, structures, institutions, etc. Depending on their mode of activity, a completely new type of socio-cultural phenomenon may emerge within the Diaspora.

This paper aims to determine whether these processes will ultimately lead to the formation of a traditional community. It also presents the self-organization experiences of the "new diaspora" through the example of one understudied community.

The present paper is based on field research conducted among Armenians in the Czech Republic in 2022. The research employed in-depth interviews, semi-structured interviews, and observation methods.

Лусине Асатуровна Танаджян, *к.и.н.*
Сюзанна Сосевна Барсегян, *к.и.н.*
Институт археологии и этнографии НАН РА

АРМЯНЕ В ЧЕШСКОЙ РЕСПУБЛИКЕ: ОСОБЕННОСТИ ОБЩИННОЙ ЖИЗНИ

Ключевые слова: диаспора, самоорганизация, новая община, чешские армяне, идентичность, потенциал, интеграция.

Среди широкого спектра исследований армянской диаспоры мало таких, которые фокусируются на новых формирующихся общинах. Большинство исследований сосредоточены на уже сформировавшихся общинах, поэтому новые диаспоральные пространства и очаги остаются незамеченными и не получают должного внимания. Основные причины этого – новые диаспорные очаги не соответствуют представлениям об армянской диаспоре, сложившимся в нашем сознании («классическая диаспора», «диаспора-жертва», «старые и новые общины» и т. д.), эти диаспорные очаги все еще не рассматриваются исследователями как нечто подходящее для того, чтобы называться общинами.

Такие общины представляют собой интересные кейсы, особенно с точки зрения их опыта самоорганизации и воспроизводства идентичности. Общины, сформировавшиеся в основном в результате миграции армян из разных стран и из Армении в советский и постсоветский периоды, недостаточно хорошо изучены.

Предполагается, что при изучении новообразованных общин необходим совершенно новый и непредвзятый подход, чтобы проследить процесс их формирования.

Существующие в Чехии очаги также требуют нового подхода к изучению сообществ. Это утверждение подкрепляется и исследовательским полем: нынешние представления чешских армян об общине отличаются от традиционного восприятия общины.

И, если община уже сформирована, она имеет совершенно иное содержание, чем классическая.

Точками притяжения являются акторы общины, которые могут быть отдельными людьми, структурами, институтами и т. д. В зависимости от формы их деятельности в диаспоре возникает совершенно новый тип социокультурного феномена.

В данной работе мы пытаемся понять, приведут ли эти процессы к традиционной форме общины. Кроме того, представляется опыт самоорганизации «новой диаспоры» на примере одной малоизученной общины. Настоящая статья основана на результатах исследования, проведенного среди армян Чешской Республики в 2022 году. Исследование проводилось с помощью методов глубинного интервью, полуструктурированного опроса и наблюдения.

Ներկայացվել է՝ 07.02.2025,
գրախոսվել է՝ 17.05.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7